



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԱԿԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

20.09.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ՍՑ-ՆԳ-2019/147

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.09.2019թ. թիվ 26/26-1/14627-2019 գրությամբ «Ջերմուկշին» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 30.08.2019թ. թիվ Ե/01/93-19 գրության հիման վրա, 02.09.2019թ. թիվ 26/26-1/14627-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Ջերմուկշին» ՓԲԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Ջերմուկշին» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Ջերմուկշին» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքի քաղաքային զբոսայգու բարեկարգման, հեծանվաուղու և սանհանգույցների կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԶԲՄ-ԱՇՁԲ-2019/1» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ջերմուկշին» ՓԲԸ-ն և որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.07.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4 կետի 3 և 4 ենթակետերի համաձայն որոշեց հարցում կատարել ՀՀ ՊԵԿ՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասին պահանջվող տեղեկությունը ստանալու նպատակով, ինչպես նաև ծանուցել «Ջերմուկշին» ՓԲԸ-ին՝ ծանուցումը ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային ձևով ներկայացնի հրավերով պահանջվող փաստաթղթերը...:

«Ջերմուկշին» ՓԲԸ-ի և ՀՀ ՊԵԿ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը:

Համաձայն ՀՀ ՊԵԿ-ի կողմից ուղարկված եզրակացության՝ Ընկերության 2016-2018 թվականների համախառն եկամուտը կազմել է 166 205 690 ՀՀ դրամ, իսկ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 215 400 000 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությանն է ուղարկվել սույն անհամապատասխանությունը շտկելու ծանուցում: Որպես շտկում՝ Ընկերությունն ուղարկել է «Ջերմուկշին» ՓԲԸ-ի «Հաշվարկ ռեզիդենտների շահութահարկի» փաստաթուղթը, համաձայն որի 2016-2018 թվականների համախառն եկամուտը կազմում է 182 205 690 ՀՀ դրամ, իսկ փաստաթուղթը ներկայացվել է առանց ՀՀ ՊԵԿ-ի կողմից հաստատման:

Սույն փաստաթղթի գնահատումն իրականացնելու նպատակով նիստը կասեցվել է և ՀՀ ՊԵԿ է ուղարկվել գրություն՝ Ընկերության կողմից ճշգրտված համախառն եկամտի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

ՀՀ ՊԵԿ-ի կողմից 2019 թվականի օգոստոսի 22-ին ստացվել է պատասխան գրություն, համաձայն որի՝ մասնակցի 2016-2018 թվականների համախառն եկամուտը կազմել է 182 205 690 ՀՀ դրամ, ինչը պակաս է մասնակցի ներկայացրած գնային առաջարկից: Ուստի, գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Ջերմուկշին» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Համաձայն ՀՀ ՊԵԿ-ի կողմից 06.09.2019թ. տրամադրված թիվ 510 տեղեկանքի՝ «Ջերմուկշին» ՓԲԸ-ի 2016-2018թթ. համախառն եկամտի հանրագումարը կազմում է 222 205 690 ՀՀ դրամ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Այսպիսով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես

իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Կարգի 63-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

«Ջերմուկշին» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը՝ 179 500 000 ՀՀ դրամ՝ որպես արժեք, և 215 400 000 ՀՀ դրամ՝ արժեք + ԱԱՀ:

«Ջերմուկշին» ՓԲԸ-ի 2016-2018թթ. համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ «ԶԲՄ-ԱՇՁԲ-2019/1» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում ներկայացված գնային առաջարկից: Մասնավորապես, համաձայն՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից 06.09.2019թ. տրամադրված թիվ 510 տեղեկանքի՝ «Ջերմուկշին» ՓԲԸ-ի 2016-2018թթ. համախառն եկամտի հանրագումարը կազմում է 222 205 690 ՀՀ դրամ:

Վերոհիշյալի հիման վրա կարելի է արձանագրել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Ջերմուկշին» ՓԲԸ-ն ունի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ, քանի որ վերջինիս երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը՝ 222 205 690 ՀՀ դրամը, պակաս չէ ներկայացված գնային առաջարկից՝ 215 400 000 ՀՀ դրամից:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ընկերությունը գտնում է, որ առկա չէ նաև Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում մասնակցի կողմից ստանձնած որևէ պարտավորության խախտում, քանի որ ՀՀ ՊԵԿ-ի կողմից 06.09.2019թ. տրամադրված թիվ 510 տեղեկանքի պայմաններում «Ջերմուկշին» ՓԲԸ-ի կողմից տրված հայտարարությունն առ այն, որ «Ջերմուկշին» ՓԲԸ-ն ունի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ, և վերջինիս երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից, համապատասխանում է իրականությանը:

Միևնույն ժամանակ Ընկերությունը հայտնել է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում արդեն իսկ քննվել են նմանատիպ բազմաթիվ գործեր՝ ՍՑ-ՆԳ-2019/125, ԳԲՔԱ-ՆԳ-2019/34 և այլն, որտեղ բողոքներ քննող անձն արձանագրել է հետևյալը՝

««Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ 4-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը

համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով, արձանագրում եմ, որ Ընկերությունը, համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 06.08.2019թ. թիվ 1958 գրության, փաստացի ունի Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով և Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ պահանջվող «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը, ուստի գտնում եմ, որ նման պայմաններում առկա չեն «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը»:

Ելնելով վերոնշյալ փաստերից ու փաստական հանգամանքներից, Ընկերությունը խնդրել է «Ջերմուկշին» ՓԲԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Ջերմուկշին» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՅ-ՆԳ-2019/147 ընթացակարգի շրջանակներում 06.09.2019թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (հետայսու՝ նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.08.2019թ. թիվ Ե/01/93-19 գրությամբ հայտնել է, որ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից 2019 թվականի հունիսի 12-ին հրապարակվել է «ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1» ծածկագրով ընթացակարգի հրավերը, որի հայտերի բացումը տեղի է ունեցել 2019 թվականի հուլիսի 22-ին: Հայտերի բացման նիստի արդյունքում «Ջերմուկշին» ՓԲԸ-ն հայտարարվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, և հրավերով սահմանված կարգով 2019 թվականի հուլիսի 25-ին վերջինիս ուղարկվել է որակավորման փաստաթղթեր ներկայացնելու

ծանուցում: ՀՀ պետական եկամուտների կոմիտե նույն օրը ներկայացվել է Ընկերության ֆինանսական միջոցների վերաբերյալ եզրակացություն ստանալու հարցում:

Ընկերության և ՀՀ ՊԵԿ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը:

Համաձայն ՀՀ ՊԵԿ-ի կողմից ուղարկված եզրակացության՝ Ընկերության 2016-2018 թվականների համախառն եկամուտը կազմել է 166 205 690 ՀՀ դրամ, իսկ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 215 400 000 ՀՀ դրամ:

Համաձայն «ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի առաջին մասի 2.5 կետի 3-րդ ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերության ուղարկվել է սույն անհամապատասխանությունը շտկելու ծանուցում: Որպես շտկում՝ Ընկերությունն ուղարկել է «Ջերմուկշին» ՓԲԸ-ի «Հաշվարկ ռեզիդենտների շահութահարկի» փաստաթուղթը, համաձայն որի 2016-2018 թվականների համախառն եկամուտը կազմում է 182 205 690 ՀՀ դրամ, իսկ փաստաթուղթը ներկայացվել է առանց ՀՀ ՊԵԿ-ի կողմից հաստատման:

Սույն փաստաթղթի գնահատումն իրականացնելու նպատակով նիստը կասեցվել է, և ՀՀ ՊԵԿ է ուղարկվել գրություն՝ մասնակցի կողմից ճշգրտված համախառն եկամտի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

ՀՀ ՊԵԿ-ի կողմից 2019 թվականի օգոստոսի 22-ին ստացվել է պատասխան գրություն, համաձայն որի՝ մասնակցի 2016-2018 թվականների համախառն եկամուտը կազմել է 182 205 690 ՀՀ դրամ, ինչը պակաս է Ընկերության ներկայացրած գնային առաջարկից: Ուստի, գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Ջերմուկշին» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/147 ընթացակարգի շրջանակներում 06.09.2019թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2019/147 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/147 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ջերմուկշին» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.07.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ջերմուկշին» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 29.07.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Ջերմուկշին» ՓԲԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվեպուր տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմում է 166 205 690 ՀՀ դրամ:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.08.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Ջերմուկշին» ՓԲԸ-ի հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.09.2019թ. թիվ 26/26-1/14627-2019 գրությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 30.08.2019թ. թիվ Ե/01/93-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումը ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում տեղեկատվություն չտրամադրվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության և 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 63-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնի հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

2)...

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ջերմուկշին» ՓԲԸ-ն:

Ընկերության ներկայացրած գնային առաջարկը կազմել է **215 400 000 ՀՀ դրամ**:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.07.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ջերմուկշին» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 29.07.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ **«Ջերմուկշին» ՓԲԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմում է 166 205 690 ՀՀ դրամ**:

Ընկերությանը ծանուցվել է երեք աշխատանքային օրյա ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.08.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն Ընկերության կողմից որպես շտկում ներկայացվել է «Ջերմուկշին» ՓԲԸ-ի «Հաշվարկ ռեզիդենտների շահութահարկի» առանց ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հաստատման, համաձայն որի Ընկերության 2016-2018 թվականների համախառն եկամուտի հանրագումարը 182 205 690 ՀՀ դրամ է, որը պակաս է ներկայացված գնային առաջարկից:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ՀՀ պետական եկամուտների կոմիտե ուղարկել է գրություն՝ Ընկերության կողմից ճշգրտված համախառն եկամտի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

Ի պատասխան Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի համապատասխան գրությանը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվել է գրություն, համաձայն որի «Ջերմուկշին» ՓԲԸ-ի 2016-2018 թվականների համախառն եկամուտի հանրագումարը կազմում է 182 205 690 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.08.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Ջերմուկշին» ՓԲԸ-ի հայտը մերժվել է:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված

պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

«Ջերմուկշին» ՓԲԸ-ն Ընթացակարգի մասնակցության դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, սակայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է Ընկերության ներկայացրած գնային առաջարկից:

Մինչույն ժամանակ «Ջերմուկշին» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 06.09.2019թ. թիվ 510 գրությունը, որի համաձայն՝ **ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն՝ «Ջերմուկշին» ՓԲԸ-ի գործունեությունից ստացված համախառն եկամուտի հանրագումարը 2016-2018թթ. կազմում է 222 205 690 ՀՀ դրամ:**

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Արձանագրում են, որ չնայած այն հանգամանքին, որ Ընկերության կողմից ներկայացված հայտարարությունը՝ Ընթացակարգի Ընթացակարգի հրավերով

սահմանված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին բավարարելու մասին որակվել է իրականությանը չհամապատասխանող, այնուամենայնիվ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 06.09.2019թ. թիվ 510 գրության համաձայն՝ Ընկերությունը փաստացի ունի Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով և Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետով պահանջվող «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը, ուստի նման պայմաններում գտնում եմ, որ «Զերմուկշին» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.09.2019թ. թիվ 26/26-1/14627-2019 գրությամբ «Զերմուկշին» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝**



ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ